

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բազմավիշ», օգոստոս. — Պլազիտի մի ծանր մեղադրանք ենք գտնում վենետիկեան հայ ամսագրի այս համարում ուղղուած նայն թերթի աշխատակից Բ. Խալաթեանի դէմ: Առաջ ենք բերում այդ ցաւալի փաստի վերաբերեալ յօդուածից կտորներ.

«... Տոյց տալու համար թէ որչափ խարուած են իրենք (Միլիթարեանք) Բ. Խալաթեանի հմտութեան մասին և անոր բանասիրական հրատարակութիւններէն, հարկ կը համարեմ ծանուցանել թէ՛ անոր «Արարացի պատմագիրքը Հայաստանի մասին» գրութեան Ա. մասն որ 1903-ի սկզբէն սկսելով (թիւ 1, 2, 4, 6, 8—9) տարւոյս յուն.— փետ.— ի թիւերով վերջ գտած է՝ լոկ քարգմանուրիւմ մ'հայտմ Կ. Պոլսոյ մէջ ապրող տութիւնը Մորթմանի հօր՝ ծանօթ արեւելագէտ, հայագէտ և սեպագրող տութիւնը Մորթմանայ՝ զերմաներէն լեզուա հրատարակած մի գործէն՝ Ա. մասին, որև ի հայ թարգմանեալ հրատարակեալ է Կարապետ Իւթիւճեանի կողմէնէ նախ իր «Մասիս»-ի 1874 տարւոյ 1542, 43, 45, 47, 48 և 50 թիւերուն մէջ ու ապա մասնաւոր տետրակաւ ալ հրատարակած է կարծեմ սա խորագրով. «Հատածք պատմութեան Հայոց քաղեալք յԱրարացի պատմագրաց ի ձեռն Տութիւնը Մորթմանայ արեւելագէտի»: Այդ յօդուածի զբերէ կէսն Հայաստանի աշխարհագրութիւնն է քաղուած Ինճիկեանի և Հ. Ալիշանի գործերէ, ինչպէս և ինք կը խոստովանի, իսկ միւս մասն Մորթմանայ գործոյն առաջին մասն կը ներկայացնէ, որ Ա. Բեկագորի արար

պատմէն քաղուած է: Տիար Բ. Խալաթեանց աստիճանի հաւատարիմ թարգմանիչն է եղած Մորթմանայ, սակայն ծանօթութիւններու բաւական ճարպիկութեամբ ընդլայնած, համառօտած ու փոփոխած է քաղարկելու համար իր աղբիւրն, և այնպէս մը ձևացուցած է թէ՛ ինք իսկ քաղած է Արար պատմագրերէն, գործ որ չպիտի կրնար ընել անշուշտ քանի որ ինք ակեղեակ չէ արարերէն»:

Սկսնակ Բանասէր

Այս աստիճան յախուռն ու վճռական մի մեղադրանքի հանգէպ ցանկալի էր լսել մեղադրուող Բ. Խալաթեանցին: Պլազիտը զորութիւններից վատագոյնն է և կրկնակ ստորացուցիչ, քանի որ կատարուած է այն մարդկանց ձեռքով, որոնք կոչուած են զիջելիքն ու բարին իրազօրծելու կեանքի մէջ: Ահա թէ ինչու մենք անկեղծօրէն ցանկանում ենք, որ Բ. Խալաթեան կարողանայ հրապարակով արդարանալ և հոտարակական խղճին զոհացումն տալ:

—

«Հանգէտ Ամսօրհայ», յուլիս. — Վիեննայի Միլիթարեանների օրգանում գտնում ենք համառօտ կենսագրութիւնը մի նշանաւոր հայ բժշկի՝ Պետրոս Հերմանթեան անունով, որ աղբել և զործել է Թրիեստ քաղաքում 18-դ դարի վերջին և 19-ի սկզբներին: Իր գաւազներէն կրտսերը Փրանցիսկոս Հերմանթեան նշանաւոր պաշտօններ է վարել Թրիեստում, եղել է քաղաքապետ և փոխ-գահերէց երեսփոխանական ժողովի: Քաղաքը ի պատիւ նրան արձան է կանգնացրել, նրա

լուստեկարով զարգարուած նամակա-
կարտեր է տպել տուել, որոնց վրայ
խտայրէն զըուած է «Փրանցիսկոս
Հերմիթ. Ժնեալ ի 6 նոյեմբերի 1811
ամի, վախճանեալ ի 16 փետրուարի
1883 ամի, պատուակալ քաղաքացի,
փոխ-զահերէց Թրիեստի երեսփոխա-
նական խորհուրդին, աննրկուն պաշտ-
պան Թրիեստի իբաւանց և քաղաքա-
ցեանց»:

Առաջ բերելով այս տեղեկութիւն-
ները՝ Վիեննայի հայ թերթը շարու-
նակում է.

«Ո՛ր հայն է որ կրնայ անապրեր
մնալ այս տողերուն և իր աչքերէն
արցունքներ չը հոսեցնել, մտածելով
որ դեռ շատ հայեր այսպէս՝ օտարնե-
րու ծառին առատ ջուր տուած են, օ-
տարներու պարտէզը չբեղացուցած են,
հայրենին միշտ աւերակ թողլով»:

Մեր կարծիքով ոչ ոքալու և ոչ
արցունք թափելու հարկ կայ. երբ
հայրենի երկրում քաղաքակրթական
մեծ գործին ծառայելու հնարաւորու-
թիւն չկայ, միայն ուրախանալ կարե-
լի է, որ հայ մարդը՝ ուր և նա ընկ-
նելու լինի շնորհիւ իր ցեղական ճա-
կատագրի՝ անպատճառ լայտնի է
դառնում որպէս քաղաքակրթական
տարր, յարում է նոր միջավայրի ա-
մենահամակրելի, ամենալուստուոր հո-
սանքներին, հօգը ապէս օժանդակում է
իր նոր հայրենիքի բարոյական և
նրկական բարգաւաճման: Իր ցեղի
հոգու մէջ քնած քաղաքակրթական
ոյժը այսպիսով մի փայլուն վիպու-
թիւն, անհրեքելի սպասոյց է տալիս
օտար երկրի տակ: Արցունքի արժա-
նի են այն պայմանները, որոնք ստի-
պում են հային թողնել իր ծննդա-
վայրը, բայց պարծնալ միայն կարե-
լի է, որ նա այնուամենայնիւ չի կոր-
չում քաղաքակրթութեան համար: Ոչ-
ոք չի կարող պնդել, թէ հայը առան-
ձին սիրով է թողնում իր հայրենի
հողը «օտարներու ծառին առատ
ջուր տուած, օտարներու պարտէզը
չբեղացուցած» լինելու համար: Պատ-
ժական ճակատագրեր իր մասնակի

արտայայտութիւններով յաճախ հեշ-
տութեամբ կարող է թիւրիմացութեան
մէջ ձգել ցեղական յատկանիշները
գնահատելու: Անհատները կարող են
լուս գգալ իրանց օտարի գոնքում,
բայց հայ ցեղը միշտ մղկալով, որը-
տի կիզիչ մորմարով է թողել իր հոգն
ու ջուրը: Չառ թերութիւններ ունինք,
բայց այս առաքելութիւնն էլ մերն է:
Վիեննայի յարգարժան Միխիթա-
րեանները հետամուտ են եղել տեղե-
կութիւններ առնել նաև Հերմիթեան
ընտանիքի միացորդները վրայ, որոնք
այժմ ապրում են Թրիեստում:

Նամակներով դիմումներ են եղել
այդ ընտանիքներին տեղեկութիւններ
առնելու նրանց մեծ հօր մասին:

«... բայց դժբախտաբար իրենց
լուսութեամբ զմեզ պատուեցին, շարու-
րակում է «Հանգէս Ամսօրեայ», ա-
նոնցմէ մէկը միայն այնպիսի պա-
տասխան մը ձգեց, որով յայտնի եղաւ
թէ չեն ուզեր յայտնել իրենց հայկա-
կան ծագումը և ամօթ իսկ կը համա-
րին դայն գիտնալ»:

«Ի՛հ, որի՛ հոգ. ամօթը իրենց,
բաւ է, որ պատմութիւնը ցոյց կու
տայ մեզ իրենց հայկական ծագումը և
մենք ալ կը կարդանք զայն այսօր՝
անզամ մը ևս հառաչանօր կրկնելով
երեքկնելով մեր առակագիր Պարտի-
զակցի Վահան վարդապետին այն նը-
շանաւոր խօսքը թէ՛

«Հայը մարդ ըլլալու է իր ցե-
ղը յիշելու,

Մարդը հայ ըլլալու է իր ցեղը
մոռնալու»:

Եւ այսպէս Միխիթարեան հայրերը
մի ազնիւ եռանդով, որ պտտի է բե-
րում իրանց հոգաւոր ուլտին, աշ-
խատում են արտառահմանում սփռած
հայութեան մեծ ու փոքր բնիկներին
մէջ պահպանել ազգային նշոյլը և մա-
րող շունչը բոլորեւ, բարձրացնել եւ
վրդովում են, որ Թրիեստում ապրող
հայ մարդու երբորդ սերունդը հրա-
ժարում է իր ծագումից: Մակայն
շատ էլ զարմանալի չէ, որ օտար մի-
ջավայրում ընկած նորեկ տարրը են-

թարկում է առսիմիլացիայի: Ինչ-
քան պէտք է վրգավունն ու ցաւն Մը-
թիթարեան հայրերը. եթէ նրանց ա-
սնէք, որ հայրենի երկրում, անցեալի
հարուստ յիշատակարաններէ կողքին
ապրող երեկուայ զերգացի հայը ծա-
ղաք ընկնելով և հարստանալով՝ յաճախ
աշխատում է մոռացութեան առ իր
ծագումը, թօթափելով վրայից՝ սրբան
հնարուար է՝ արտաքին նշանները, ինչ-
պէս՝ անունը, լեզուն, նիստուկացը, և
առանձին գիտաւարեալ դայն առ իր
անհատական, հասարակական յարաբե-
րութիւններին: Հայ անուններ ու ազ-
գանուններ գիտենք մինչև այն սատի-
ճան աղաւաղուած, որ ոչ մի կերպով
նրանց ծագումը դռնել հնարուար չէ:
Իրանց հագինների պատկերն է այն:
Հայ ցեղի պատմական ճակատագիրը
ծանր է եղել, դարձանալի չէ, որ նրա
սակ ծալում են շատ մէջքեր:

«ԱՆԻԱԿԵՆԱՆ Մամուլ», յունիս.
— Իզմիրի հայ շարաթաթիկերթը իր
աշխատակիցների թւում մի երգիծա-
րան սրամիտ գրիչ ունի, պ. Ալֆիտար:
Այս անգամ նա զծագրիկ է պոլսեցի
հայ վարժապետի ախպը, որ ծիծաղա-
շարժ լինելուց աւելի տխուր մտքերի
առիթ է տալիս.

«Քրիստոսի աշակերտները՝ Պալոյ
վարժապետներէն աւելի ստակ կը շա-
հէին նոյնիսկ այն ատեններն երբ և-
րեք հատ ձուկ ուտելու համար հինգ
հազար հոգի մէկտեղ սեղան կը նըս-
տէին:

Ամսականը շորս հարիւր դրուշ բլ-
լալուն պէս՝ ակնոց դըրածով կսկսի
Պոլսեցի վարժապետը:

Վարժապետներուն համար այն է
հոգաբարձուն ինչ որ է Պիլմարը
Ֆրանսացիի մը համար. դգալ մը ջուրի
մէջ կը խզգեն:

Վարժապետին սփռածն է լոյս,
կերածը բոյս, սիրածը կոյս և գրամա-
դուլը յոյս:

Որքան փնտռեալ խախտոյս,
Բաղդը այնքան կուտայ խոյս:
Իր ամբողջ խէտին է ձեռք մը նոր

հազուստ, մետաքոն հոգանոց մը և
արծաթ ժամացոյցին ոսկի շղթայ մը:
Այս վաճառքով կը մեռնի:

Վարժապետին էն մեծ արգուզարդն
է կօշիկին ներկը:

Գնկան մը հետ խօսած ժամա-
նակին կտս կարմիր կը կարին:

Վարժապետի հետ թուղթ խաղա-
ցած ունի՞ք: Հինգ հազար բուհնով
պէղիկի յարրի մը սովորաբար 25
վայրկեան կը տեւ. իսկ վարժապետի
հետ 2 ժամ և 34 վայրկեան:

Վերակի օրերը անպատճառ եկեղե-
ցի կերթայ... Թաղական խորհրդա-
րանէն ներս ակնարկ մը նետելու հա-
մար:

Ալեծածան քալուածք մը ունին որ
միմիայն իրենց յատուկ է:

Փողկապը շարունակ օձիբէն վեր
կը մազլցի:

Քրանսերէնի գտներ կու տայ և
զազղիւացիի մը հետ տաճկերէն կը խօ-
սի:

Իրեն համար Վիքթօր Հիւսօ ոտա-
նուար շինող Աստուած մըն է:

Վարժապետը կտք նստելու հա-
մար պէտք է որ թաղին մէջ հարուս-
տի մը յուղարկաւաբութիւնը տեղի ունե-
նայ:

Հիմայ չեմ դիտեր, բայց իմ ժա-
մանակս վարժապետ չկար որուն ոտ-
քերը... պերճախօսութիւն չունենային:
Եւրոպական վարժապետներու արխ-
մար աշակերտները՝ ազգային վարժա-
րաններու մէջ վարժապետ կըլլան:

Փրկիչը իրենց առաքելդին Hôtel
Terminus-ն է:

Չառապէր կըլլան, բայց բիշով կապ-
րին:

Աշակերտը «միտիւ» կրոն իրեն,
թաղականը «պարոն», անտեսը «պա-
տուկի» և դոքանչը «էֆէնտի»:

«REVUE», 15 Août.— «Բէպի
համաշխարհային համաձայնութիւնը»
վերնագրի տակ առաջ է բերում պար-
բերաբար այն բոլոր փաստերը, որոնք
խաղաղութեան և միջազգային համա-

ձայնութեան էվոլյուցիան է ցոյց տալիս:

«Ճարոնադիւնով «խաղաղութեան առաքեալ» իր բարերար դերը, առում է «Revue»-ն, ինգլուարդ VII-ը կարողացաւ անշուշտ համոզել իր կայսերական քննորդուն Գիլտմ, և Նոն-դոնում ստորագրուց մի համաձայնութիւն, որի զլխաւոր կէտերը նման են ուրիշ ազգերի հետ Անգլիայի կայսցրած համաձայնութեան: Երկու երկրներին մամուլն ընդհանուր վատաստութեամբ վերաբերուց այս իրաւաբանական հաշտութեան: Թողնենք ժպտալ լրագրողներին և խաղաղութեամբ ապաստենք առաջին անհամաձայնութեանը, երբ նա կը ծագի:

«Անկալցիներ», որ մեր նշանաւոր աշխատակից Դեպուրենկ դը-Գոնտտանը Գիլտմ լինելով այդ ժամանակ՝ անգլիական թագաւորի միջոցով ներկայացաւ գերմանական կայսրին: Ուրոշ թերթներ հասկացնում են, որ Դեստուրենկի ներկայութիւնը ցոյց է տալիս նկատի առնուած հնարաւորութիւնը Ֆրանս-գերմանական համաձայնութեան:

«Ճվկը-նորվեգիայի հետ ստորագրուած նոր համաձայնութեամբ վեցի է հասնում այն երկրներին թիւը, որոնք համաձայնել են Ֆրանսիայի հետ լատին իրաւաբանական միջնորդ դատարանին գիմել վէճերի համար: Այս երկրներն են՝ Հոլլանդիա, Դանիա, մարք, Իտալիա, Անգլիա և Իսպանիա:

«Այսօր միջնորդ դատարանի իրաւաբանութիւնը — տարաբախտաբար ապակալին նեղ սահմաններում — Թաւրածում է Եւրոպայի ամբողջ արեւմուտքի և հիւսիսի վրայ: Միացեալ-Նահանգների նախագահի ընտրութիւնից անմիջապէս յետոյ, եթէ Բուլգարիա վերընտրուի, վեց ամսում ամերիկական մեծ հանրապետութիւնը կը կայացնի նման համաձայնութիւններ. նրա օրինակին կը հետեն Ամերիկայի հարաւի և կենտրոնի բոլոր պետութիւնները: Ատլանտեան Ովկիանոսը այն ժամանակ արժանի կը լինի կո-

չուի՝ «Խաղաղ Ովկիանոս»: Արդարեւ նրա թողած բոլոր երկրները կը լինեն «արդարադատութեան ազգեր» երկրները:

«Անկալցիներ» նոյնպէս, որ Ճվկ-յարիայի Դաշնակցական Խորհուրդը նորերս յանձնարարել է իր նախագահ Կոմսեսոյին բանակցութեան մէջ մըտնել բոլոր երկրներին հետ մշտական համաձայնութիւն կայացնելու համար միջնորդ դատարանով:

«Յոյց տանք բարի հետեւները ազգերի համաձայնութեան այս մեծ գաղափարի: Դանուրի գետաբերումը ազատ շրջագծերով կղզիներ կան, որոնք Բուվինիայի և Բուլգարիայի վէճի առարկան են եղել միշտ: Այսուհետեւ այս փոքրիկ անհամաձայնութիւնը պէտք է լուծի բարեկամաբար մի յանձնաժողով: Վերջապէս յայտնի է նոյնպէս, որ զոյսութիւն ունի «Դանուրի միջնորդային մի յանձնաժողով»:

«Նալուի գետաբերանում Կանաա կղզու Թերապոետութիւնը վէճի առարկայ է կորէացիներին և շինացիներին մէջ. այժմ իմանում ենք, որ ձաղոնիան ընտրուած է միջնորդ դատարար: Պերուն (Հար. Ամերիկ.) վերջնականապէս համաձայնել է Բրազիլիայի հետ միջնորդ դատարանով լուծելու իրանց սահմանային հարցերը: Փրանսիական և պորտուգալական յանձնախմբերը կարողացել են խաղաղութեամբ լուծել Սենեգալի և Գուինէի սահմանի վէճը:

«Վերջապէս հրապարակ հանենք մի փաստ, որ ուրիշ ժամանակներում կարող էր կռիւ առաջ բերել Շենդ Ալբիոնի» և մեր երկրի (Փրանսիայի) մէջ: Փրանսիական զբօշակն իրաւունք ունի արդեօք ծածանել Մոսկատում Պարուկական Ծոցում: Այս հարցը անշուշտ առանձին կարեւորութիւն չունի. մենք ձգ մի շահ չունինք այս երկրում, որ Անգլիական հնդկաւտանի ազդեցութեան շրջանումն է գտնուում:

«Բայց այլ ժամանակներում այն պատրուակով, թէ մի շին բոմով համաձայնութիւն է ստորագրուել Փրանսիայի և տեղացի որեւէ փոքրիկ իշխա-

նի մէջ, մենք մեզ կը համարէինք վերաւորուած, և մի արեւմտ ընդհարում առաջ կը դար:

«Բախտաւորապէս այս փոքրիկ հարցը շուտով պիտի ենթարկուի Լահէի միջնորդ գաղափարներին: Զնորհակալ լինենք անգլիական կառավարութեան իր այս զիջումի համար: Այսպիսով այս «սրտադին համերաշխութեան» ոգին վստահութիւն է ներշնչում բոլոր քաղաքակիրթ ազգերին: «Մեր բանուրները փոխադարձ այցելութեան զնալով Անգլիայի իրանց ընկերակիցներին, սրտադին ընդունելութիւն գրտան լորդ մերի և էդուարդ VII թագաւորի մօտ: Եւ ի՞նչ նշանակալից են մերի խօսքերի վերջը:

«Առաջէք ձեր բարեկամներին, որ մեզ հաճելի է տեսնել Ֆրանսիացիներին մեզ մօտ, որ մենք կը ջանիկ ենք լսել աւելի յաճախ քան առաջ Ֆրանսիական լեզուն մեր փողոցներում, որ բարեկամական զգացմունքով լի մեր սրտերը բաց են ձեր համաքաղաքացիների առաջ»:

«*Revue*» բաղմամբիւ այլ փաստեր է բերում՝ ցոյց տալով, թէ ինչ հոկայական քայլեր է անում խաղաղութեան զաղափարը, որ տարաբախտաբար անկարող եղաւ արգելիլու այդ շտեմունքով արեւմտեան ժողովուրդները մանջուրական դաշտերում:

Սակայն քանի որ այդ համաձայնութիւնը կը ծառայի միմիայն աւելի կամ պակաս երջանիկ ազգերի բարե-

կեցութեանը, քանի խաղաղութեան անունից խօսող քաղաքակիրթ համարուած ժողովուրդները միայն իրանց մասին կը մտածեն՝ մոռացութեան տալով իրապէս դժբախտ ու տառապող փոքրիկ ազգերին — ինչպէս թիւրքական բեմիմի քրիստոնեայ զոհերն են, այդ բոլոր բարձրագոյն համաձայնութիւնները շատ բիշ արժէք ունին: Վհատեցուցիշ, փարիսեցիական միյնտ մղող բան կայ այդ բոլոր խաղաղասիրական ցոյցերի մէջ այն ժամանակ, երբ թոյլերը հեծեծանքով ու արցունքով խեղդում են իրանց արեւմտ մէջ: Եւ քաղաքակիրթութիւն, և՛ մարդասիրութիւն, և՛ համաշխարհային եղբայրութիւն չաբունակում են միայն հեղեղական ժպիտ յարուցանել և՛ նրանց շրթունքներին, որոնք տառապում են, և՛ նրանց, որոնք արեւմտ-արցունք են քամել տալիս:

Ինչպէս որ մի հատիկ անհատի կըրտած անարդարութիւնը բաւական է մեռցնելու հաւատը գէպի որեւէ թէկուզ քաղաքակիրթ երկրի արդարադատութիւնը, նոյնպէս մի հատիկ ազգի կըրած մարտիրոսութիւնը բաւական է, որ կառկածի ենթարկուի քաղաքակիրթ համարուած ազգերի արդարադատութեան և մարդասիրութեան զգացմունքի անկեղծութիւնը:

Լացողները բառեր չեն ուզում, այլ խնամատ ձևք, որ նրանց արցունքը սրբի: